ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-22-9/41-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 11.11.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս **ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև **«Գնորդ»**, մի կողմից և **«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թաղևոսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ **«Վաճառող»**, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **26.09.2022թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-22-9/41-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելվածներ № 1-ի և №2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է *4 137 200 (չորս միլիոն հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, բացառությամբ Համաձայնագրի Հավելված 1-ով սահմանված 10-րդ չափաբաժնի ապրանքատեսակի, որի մասով Վաճառողը ԱԱՀ չի վճարում,* որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի № 1 և №2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը**, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Ազատության 26/8 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 217002182558001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01210095 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Բ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ |

Ա. Աևեյկ Աոոշաև
0057860333

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-9/41-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | Չ/մ | Քանակը | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը 2022թ. ըստ եռամսյակների, այդ թվում՝ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 21.12.2022թ. |
| 1 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ TnT | լրակազմ | 1 | 20 200 | 20 200 | 1 |
| 2 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ CMV IGM | լրակազմ | 1 | 69 000 | 69 000 | 1 |
| 3 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ TOXO IgM | լրակազմ | 1 | 72 000 | 72 000 | 1 |
| 4 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ TOXO IgG | լրակազմ | 1 | 72 000 | 72 000 | 1 |
| 5 | բժշկական այլ գործիքներ և պարագաներ/Չափիչ բջջիջ | հատ | 1 | 1 439 000 | 1 439 000 | 1 |
| 6 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հերպես HSV(1+2) | լրակազմ | 1 | 540 000 | 540 000 | 1 |
| 10 | փորձանոթներ/EDTA 2մլ Փորձանոթներ | հատ | 35000 | 55 | 1 925 000 | 35000 |

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

21- Ակցիզ Առգում
005786033

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-9/41-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | CPV կոդը | Ընդհանուր գումարը | վճարումը նախատեսվում է իրականացնել 2022թ., համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ |
|---|---|---|---|---|
| | | | | չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 26.12.2022թ. |
| 1 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ TnT | 33691400/3 | 20 200 | 20 200 |
| 2 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ CMV IGM | 33691400/8 | 69 000 | 69 000 |
| 3 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ TOXO IgM | 33691400/10 | 72 000 | 72 000 |
| 4 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրեսիկոնտրոլ TOXO IgG | 33691400/11 | 72 000 | 72 000 |
| 5 | բժշկական այլ գործիքներ և պարագաներ/Չափիչ բաժակ | 33141211/1 | 1 439 000 | 1 439 000 |
| 6 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հերպես HSV(1+2) | 33691420/217 | 540 000 | 540 000 |
| 10 | փորձանոթներ/EDTA 2մլ Փորձանոթներ | 33191310/4 | 1 925 000 | 1 925 000 |
| Ընդամենը | | | 4 137 200 | 4 137 200 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ի/- Անցել Առցանց
005786032